ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ինեսա Վահագի Նուշիկյանի «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով՝ Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Ինեսա Վահագի Նուշիկյանի «Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Աշխատանքի նպատակն է բացահայտել բանկային նորարարությունների կիրառման առանձնահատկությունները, գնահատել դրանց ազդեցությունը բանկերի գործունեության արդյունավետության վրա և մշակել նորարարական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության գնահատման մեթոդաբանական և մոդելային մոտեցումներ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է համաշխարհային ֆինանսական համակարգում տեղի ունեցող թվային վերափոխումներով, ֆինանսական տեխնոլոգիաների (FinTech) արագ զարգացմամբ և բանկային ծառայությունների թվայնացման խորացմամբ: Ժամանակակից պայմաններում բանկերի մրցունակության բարձրացման, ծառայությունների որակի բարելավման և ռիսկերի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից մեկը նորարարական տեխնոլոգիաների ներդրումն է, ներառյալ արհեստական բանականության, բիոմետրիկ նույնականացման և բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառումը:

Միաժամանակ, գիտական գրականության մեջ սահմանափակ են այն հետազոտությունները, որոնք համակողմանիորեն ուսումնասիրում են բանկային նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետությունը հատկապես ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունների համատեքստում: Այս հանգամանքը պայմանավորում է նորարարական պրոդուկտների ներդրման գործընթացների տեսական և մեթոդաբանական ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրները և բացահայտել զարգացման հնարավորությունները: Դրված նպատակի իրագործման համար հետազոտությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել բանկային նորարարությունների առանձնահատկություններն ու տեսակները,
- ✓ ներկայացնել բանկային նորարարական պրոդուկտների ներդրման միջազգային փորձը և զարգացման միտումները,
- ✓ ուսումնասիրել բանկային համակարգում նորարարական պրոդուկտի ներդրման արդյունավետության գնահատման մեթոդները և մոտեցումները,

- ✓ գնահատել ՀՀ առևտրային բանկերի նորարարական գործունեությունը և առաջարկվող նորարարական լուծումները,
- ✓ հետազոտել ՀՀ բնակչության կողմից բանկային նորարարական պրոդուկտների կիրառման մակարդակը և դինամիկան,
- ✓ գնահատել նորարարական պրոդուկտների ներդրման ֆինանսական ազդեցությունը,
- ✓ բացահայտել նորարարական պրոդուկտների ներդրման հիմնախնդիրները ՀՀ առևտրային բանկերում,
- ✓ մշակել ՀՀ առևտրային բանկերում նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման մոդելներ,
- ✓ վերլուծել ՀՀ առևտրային բանկերում պրոդուկտների ներդրման հեռանկարները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը՝ ՀՀ առևտրային բանկային համակարգն է՝ որպես նորարարական պրոդուկտների ձևավորման, զարգացման և ներդրման հիմնական միջավայր, ***իսկ առարկան***՝ ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման խթանման, հիմնախնդիրների բացահայտման և արդյունավետության բարձրացման կառավարման մեխանիզմների համալիր կատարելագործման հնարավորությունները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Հետազոտության հիմնական գիտական արդյունքը կայանում է ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման և դրանց զարգացման հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկությունների և գնահատման մոդելների մշակման մեջ: Աշխատանքում փորձ է արվել համադրել նորարարական տեխնոլոգիաների կիրառման տեսական հիմքերը և ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունները՝ առաջարկելով նորարարությունների արդյունավետության գնահատման համակարգային մոտեցումներ: Որպես գիտական նորույթ ատենախոսի կողմից ներկայացվել են հետևյալները.

- ✓ Տեխնոլոգիական–կազմակերպչական–միջավայրային (TOE) և ռազմավարական (TOES) մեթոդաբանությունների կիրառմամբ ՀՀ առևտրային բանկերում համակարգված ձևով բացահայտվել և դասակարգվել են նորարարական բանկային պրոդուկտների ընդունման վրա ազդող հիմնական տեխնոլոգիական, կազմակերպական և միջավայրային խոչընդոտները, ինչը հնարավորություն է տվել գիտականորեն հիմնավորել նորարարությունների ներդրման սահմանափակող գործոնների կառուցվածքն ու ազդեցության մակարդակը:
- ✓ Մշակվել է մատնահետքերի նույնականացման արդյունավետության ինդեքս (Fingerprint Identification Efficiency Index – FIEI) մոդել, որը հիմնված է ներդրումների վերադարձելիության (ROI), ծախս–օգուտ վերլուծության (CBA) և արժեքի արդյունավետության (VE) ցուցանիշների վրա, որը հնարավորություն է տալիս նորարարական տեխնոլոգիաների ներդրման, շահութաբերության աճի

և գործառնական ռիսկերի նվազման համադրմամբ քանակապես գնահատել և բարելավել առևտրային բանկի գործունեության արդյունավետությունը:

- ✓ Մշակված վարկավորման արհեստական բանականության արդյունավետության ինդեքսի (AI Lending Efficiency Index – AILEI) մոդելի հիման վրա գնահատվել է արհեստական բանականության ներդրման ազդեցությունը բանկային վարկավորման գործընթացների արդյունավետության, շահութաբերության և վարկային ռիսկերի կառավարման վրա: Մոդելը հնարավորություն է տալիս նաև բացահայտել ներդրման ֆինանսական և գործառնական արդյունքները՝ հիմնվելով տոկոսային եկամտի, գործառնական ծախսերի և վարկային կորուստների փոփոխությունների վրա:
- ✓ Կառուցվել է խելացի պայմանագրերի ավտոմատացման ֆինանսական ազդեցության գնահատման մոդել (SCVM), որը հիմնված է օպերացիոն, իրավական, ժամանակային և եկամտային ցուցանիշների համակցված գնահատման վրա: Մոդելը թույլ է տալիս քանակակապես գնահատել խելացի պայմանագրերի ներդրման տնտեսական արդյունավետությունը և բացահայտել բանկի շահութաբերության աճի, ծախսերի նվազման ու գործընթացների օպտիմալացման հիմնական գործոնները:
- ✓ Մշակվել է բանկային նորարարական արդյունավետության համակցված ինդեքս՝ BIECI (Bank Innovation Efficiency Composite Index), որը հիմնված է հեղինակային FIEI, AILEI և SCVM երեք մոդելների վրա և որը թույլ է տալիս քանակապես գնահատել բանկային նորարարական տեխնոլոգիաների համակցված ազդեցությունը՝ միավորելով օպերացիոն արդյունավետության, ֆինանսական արդյունքների, իրավական ծախսերի նվազման և գործարքների արագացման ցուցանիշները, հնարավորություն տալով գնահատել և համեմատել առևտրային բանկերի նորարարական ակտիվությունը և բացահայտել բանկի գործունեության իրական արդյունավետությունը նորարարությունների ներդրման պայմաններում:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Ի.Վ. Նուշիկյանի ատենախոսությունը իրենից ներկայացնում է ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման և դրանց արդյունավետության գնահատման հիմնախնդիրներին նվիրված համալիր հետազոտություն: Աշխատանքում ներկայացված են տեսական և կիրառական առաջարկություններ, որոնք ուղղված են բանկային նորարարական տեխնոլոգիաների ներդրման գործընթացների կատարելագործմանը:

Ատենախոսության շրջանակում մշակված գործիքակազմը, կատարված տեսամեթոդաբանական եզրակացությունները, կիրառական տեսանկյունից, իրատեսական են, ինչն էլ հետազոտությանը հաղորդում է թե՛ գիտական արժեք, թե՛ գործնական արդիականություն:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Առաջին՝ «Նորարարական պրոդուկտների ներդրման տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում ատենախոսը քննարկել է բանկային նորարարությունների էությունը, դրանց տեսակները և առանձնահատկությունները բանկային համակարգում: Գլխում ներկայացվել են բանկային նորարարական պրոդուկտների ներդրման արդյունավետության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել տեխնոլոգիական, կազմակերպական և միջավայրային գործոններին, որոնք ազդում են նորարարությունների ընդունման և տարածման գործընթացների վրա: Միաժամանակ ուսումնասիրվել է բանկային նորարարությունների զարգացման միջազգային փորձը, վերլուծության են ենթարկվել թեմային առնչվող հայաստանյան և արտասահմանյան գիտական աշխատությունները, միջազգային կազմակերպությունների վերլուծական նյութերը և բանկային ոլորտում կիրառվող ժամանակակից մոտեցումները:

Երկրորդ՝ «Նորարարական պրոդուկտների կիրառման վերլուծությունը և առկա իրավիճակը ՀՀ բանկային համակարգում» գլխում ատենախոսը իրականացրել է ՀՀ առևտրային բանկերում նորարարական գործունեության համակողմանի վերլուծություն: Գլխում ուսումնասիրվել են բանկային նորարարական պրոդուկտների կիրառման մակարդակը և դրանց զարգացման դինամիկան, ինչպես նաև գնահատվել է բնակչության կողմից բանկային նորարարական ծառայությունների օգտագործման աստիճանը: Վերլուծության արդյունքում բացահայտվել են նորարարական տեխնոլոգիաների ներդրման հիմնական հիմնախնդիրներն ու սահմանափակումները ՀՀ առևտրային բանկերում, ինչպես նաև ներկայացվել են դրանց հաղթահարման հնարավոր ուղղությունները:

Երրորդ՝ «Նորարարական բանկային պրոդուկտների ներդրման հիմնուղիները և դրանց ազդեցության գնահատումը» գլխում ատենախոսը ներկայացրել է ՀՀ առևտրային բանկերում նորարարական տեխնոլոգիաների ներդրման զարգացման հնարավորությունները և դրանց կիրառման հեռանկարները: Գլխում առաջարկվել են նորարարական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության գնահատման մոդելային մոտեցումներ, որոնց միջոցով գնահատվել է տարբեր նորարարական լուծումների ազդեցությունը բանկերի գործունեության արդյունավետության վրա: Մասնավորապես մշակվել են նորարարական տեխնոլոգիաների արդյունավետության գնահատման հեղինակային մոդելներ և ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս քանակապես գնահատել դրանց ներդրման տնտեսական և գործառնական ազդեցությունը բանկերի գործունեության վրա:

Եզրակացություն բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված տեսական և գործնական բնույթի առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխում ներկայացվում է ուսումնասիրվող ոլորտում տարբեր երկրների օրինակներով խելացի պայմանագրերի (smart contracts) ներդրման փորձը: Աշխատանքը կշահեր, եթե մի քանի կոնկրետ բանկերի օրինակով ավելի հանգամանալից անդրադարձ կատարվեր խելացի պայմանագրերի ներդրման գործնական գործընթացին և դրանց կիրառման արդյունքներին:
2. Աշխատանքի 70-րդ էջում ներկայացվում է Smart Integration Index (SII) ցուցանիշը, որը հեղինակային մոտեցմամբ նախատեսված է գնահատելու բանկային նորարարական պրոդուկտների խելացի ինտեգրման մակարդակը: Նշված ցուցանիշի կիրառական նշանակությունը առավել տեսանելի կլիներ, եթե այն ներկայացվեր նաև որևէ ՀՀ առևտրային բանկի օրինակով:
3. Աշխատանքն առավել ամբողջական կլիներ, եթե նորարարական բանկային պրոդուկտների շրջանակում ուսումնասիրվեին նաև միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից վարկային սքորինգային համակարգերը և գնահատվեին դրանց ներդրման հնարավորությունները ՀՀ բանկային համակարգում:
4. Ատենախոսությունում, որպես հիմնական ուսումնասիրվող բանկ ընտրվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն: Աշխատանքը կշահեր, եթե իրականացվեր համեմատական վերլուծություն Ամերիաբանկի թվայնացման մակարդակի և Հայաստանի Հանրապետության այլ առևտրային բանկերի միջև, ինչը թույլ կտար ավելի ամբողջական պատկերացում կազմել բանկային համակարգում նորարարական գործընթացների զարգացման մասին:
5. Ատենախոսությունում տեղ են գտել որոշ տեխնիկական և շարահյուսական բնույթի թերություններ, որոնք, սակայն, էական ազդեցություն չեն ունենում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքի և ներկայացված արդյունքների վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոս Ի. Վ. Նուշիկյանը կատարել է արդիական, թեմային նվիրված, ծավալուն և գիտական տեսանկյունից հիմնավորված հետազոտություն, որը ներառում է տեսական, մեթոդաբանական և կիրառական բնույթի մոտեցումներ: Աշխատանքը կարելի է գնահատել որպես ինքնուրույն իրականացված գիտական հետազոտություն, որի շրջանակում ուսումնասիրվել և լուծումներ են առաջարկվել ՀՀ բանկային համակարգում նորարարական պրոդուկտների ներդրման և դրանց արդյունավետության գնահատման հետ կապված մի շարք կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան և արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու ստացված գիտական արդյունքները: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու գիտական նորույթները ներկայացված և լուսաբանված են հեղինակի հրապարակած 10 գիտական հոդվածներում, որոնցից մեկը տպագրված է Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրում :

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, **«Նորարարական պրոդուկտների ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Ինեսա Վահագի Նուշիկյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
Տնտեսագիտության թեկնածու՝ Սուրեն Սեյրանի Բաբաջանյան

«17» մարտ, 2026թ.

Տնտեսագիտության թեկնածու Ս.Ս.Բաբաջանյանի ստորագրությունը հաստատում եմ

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ՝ գործադիր տնօրեն **Մ. Ս. Անանյան**